



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. հունվարին /վերլուծություն/

2006թ. հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 6695 գործարքներ, որոնց քանակը, նախորդ համադրելի ժամանակահատվածի՝ 2005թ. հունվարի համեմատ, աճել է 9.9%-ով: Անշարժ գույքի շուկայի վերլուծությունները ցույց են տալիս, որ շուկայի ակտիվության բնորոշման տեսանկյունից տարբեր տարիների համեմատությունների համար անշարժ գույքի նկատմամբ տարեսկզբին /հունվարին/ և տարեվերջին /դեկտեմբերին/ իրականացված գործարքների ծավալները համեմատելի չեն և համադրելի ժամանակահատվածներ չեն հանդիսանում:

2006թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2801 օտարման գործարքների 88.0%-ը կազմել են առուվաճառքները, 10.9%-ը՝ նվիրատվությունները և 1.1%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 36.8%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 35.0%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2006թ. հունվարին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը 2005թ. հունվարի համեմատ աճել է 12.2%-ով: 2006թ. հունվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 57.5%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2005թ. հունվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.4%-ով:

2006թ. հունվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

/1ԱՄՆ դոլարը 2006թ. հունվարին համարժեք է 452.8դրամին/

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հունվարին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
		հունվար 2005թ.	հունվար 2006թ.	դեկտեմբեր 2005թ.
Կենտրոն	157300.0-435900.0	255400.0	354300.0	337300.0
Արաբկիր	112350.0-314600.0	204000.0	276200.0	266600.0
Քանաքեռ-Զեյթուն	89900.0-224700.0	126300.0	166200.0	159900.0
Նոր-Նորք	89900.0-188700.0	112500.0	156700.0	152700.0
Ավան	80900.0-157300.0	108400.0	138600.0	134800.0
Էրեբունի	71900.0-179800.0	100400.0	135900.0	133400.0
Շենգավիթ	71900.0-202200.0	121700.0	169800.0	163700.0
Դավթաշեն	89900.0-202200.0	127200.0	173200.0	166200.0
Աջափնյակ	89900.0-202200.0	119500.0	158600.0	153900.0
Մալաթիա-Մեքաստիա	89900.0-202200.0	116500.0	154000.0	150000.0
Նուբարաշեն	53900.0-112350.0	49000.0	96900.0	92200.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	53900.0-435900.0	131000.0	180000.0	173700.0

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. հունվարին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 3.6%:

2006թ. հունվարին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 318 բնակարաններ, որոնց քանակը 2005թ. հունվարի համեմատ աճել է 1.3%-ով:

2006թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները	Միջին գները /ՀՀ դրամ/
--------	----------	---------------------------------	-----------------------

		2006թ. հունվարին /ՀՀ դրամ/	հունվար 2005թ.	հունվար 2006թ.	դեկտեմբեր 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	36400.0-72700.0	37500.0	51200.0	50300.0
	Այարան	13600.0-27300.0	19300.0	23800.0	23600.0
	Թալին	11400.0-25000.0	16100.0	22300.0	21700.0
Արարատ	Արտաշատ	25000.0-50000.0	31300.0	41300.0	40800.0
	Մասիս	36400.0-68200.0	32600.0	52400.0	51600.0
	Վեդի	22700.0-45400.0	21100.0	35700.0	34200.0
	Արարատ	20400.0-45400.0	21500.0	37800.0	37100.0
Արմավիր	Վաղարշապատ	50000.0-95400.0	56300.0	75700.0	74200.0
	Արմավիր	27300.0-59100.0	35500.0	46400.0	44400.0
	Մեծամոր	18200.0-36400.0	16300.0	29200.0	25300.0
Գեղարքունիք	Սևան	18200.0-40900.0	18500.0	31700.0	30100.0
	Գավառ	13600.0-29500.0	16800.0	22700.0	22400.0
	Սարտունի	22700.0-68200.0	18000.0	36700.0	36000.0
	Վարդենիս	9100.0-25000.0	8700.0	19400.0	19200.0
	Ճամբարակ	5900.0-20400.0	8900.0	10700.0	10700.0
Լոռի	Վանաձոր	27300.0-47700.0	33200.0	42700.0	42000.0
	Ստեփանավան	15900.0-29500.0	18200.0	23000.0	22800.0
	Սյիտակ	18200.0-45400.0	23400.0	26900.0	26700.0
	Ալավերդի	9100.0-22700.0	13000.0	18300.0	18100.0
	Տաշիր	11400.0-25000.0	12500.0	20000.0	19800.0
	Թումանյան	4100.0-11400.0	5200.0	5300.0	5200.0
	Շամլուղ	2300.0-8400.0	2900.0	2800.0	2700.0
	Ախթալա	6800.0-16100.0	10700.0	10400.0	10300.0
Կոտայք	Արվյան	45400.0-90900.0	57300.0	80400.0	77500.0
	Նոր Հաճն	40900.0-63600.0	40200.0	57200.0	56400.0
	Բյուրեղավան	22700.0-50000.0	24900.0	37700.0	37000.0
	Եղվարդ	31800.0-59100.0	29200.0	51100.0	47900.0
	Հրազդան	20400.0-40900.0	25300.0	34300.0	30200.0
	Ծաղկաձոր	18200.0-68200.0	46000.0	61100.0	56700.0
	Չարենցավան	25000.0-38600.0	22500.0	36100.0	35400.0
Շիրակ	Գյումրի	27300.0-54500.0	38700.0	44500.0	43800.0
	Արթիկ	15900.0-31800.0	15500.0	25600.0	25400.0
	Մարալիկ	8200.0-31800.0	14000.0	21700.0	21600.0
Սյունիք	Գորիս	20400.0-59100.0	21000.0	45800.0	45000.0
	Կապան	22700.0-36400.0	17200.0	35700.0	31800.0
	Միսիան	18200.0-40900.0	19100.0	28300.0	28000.0
	Մեղրի	13600.0-34100.0	12800.0	23700.0	23500.0
	Ագարակ	9100.0-27300.0	12400.0	17800.0	17600.0
	Քաջարան	9100.0-22700.0	9800.0	21700.0	17000.0
	Դաստակերտ	4500.0-11400.0	6500.0	6400.0	6300.0
Վայոց Ձոր	Վայք	13600.0-36400.0	21500.0	31000.0	30600.0
	Եղեգնաձոր	25000.0-59100.0	28900.0	44200.0	43000.0
	Ջերմուկ	36400.0-81800.0	31900.0	52100.0	46200.0
Տավուշ	Դիլիջան	18200.0-50000.0	23200.0	34900.0	34200.0
	Իջևան	27300.0-72700.0	29300.0	43000.0	38700.0
	Բերդ	18200.0-45400.0	18400.0	25900.0	25700.0
	Նոյեմբերյան	9100.0-22700.0	13600.0	14300.0	14200.0

2006թ. հունվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 3.9%:

2006թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 366 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 78, մյուս մարզերում միասին վերցրած՝ 288: 2005թ. հունվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 22.4%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել է 3.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 32.1%-ով:

2006թ. հունվարին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հունվարին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
		հունվար 2005թ.	հունվար 2006թ.	դեկտեմբեր 2005թ.
Կենտրոն	136300.0-908800.0	256200.0	357900.0	344300.0
Արարկյի	90900.0-454400.0	204600.0	283500.0	274700.0
Քանաքեռ-Զեյթուն	68200.0-272600.0	126800.0	168800.0	163900.0
Նորք-Մարաշ	90900.0-454400.0	173500.0	183900.0	181000.0
Ավան	90900.0-363500.0	109000.0	142900.0	139000.0
Էրեբունի	68200.0-227200.0	100800.0	141900.0	138800.0
Շենգավիթ	68200.0-204500.0	122000.0	173400.0	170600.0
Դավթաշեն	90900.0-409000.0	127800.0	175300.0	171200.0
Աջափնյակ	68200.0-272600.0	119900.0	160600.0	156800.0
Մալաթիա-Սեբաստիա	68200.0-409000.0	117000.0	157700.0	154200.0
Նուբարաշեն	36400.0-113600.0	50000.0	98500.0	93100.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	36400.0-908800.0	137100.0	185800.0	180700.0

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. հունվարին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ ամսական աճը կազմել է 2.9%:

2006թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հունվարին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
			հունվար 2005թ.	հունվար 2006թ.	դեկտեմբեր 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	27300.0-81800.0	43100.0	52900.0	51700.0
	Ապարան	13600.0-36400.0	19900.0	25600.0	24900.0
	Թալին	13600.0-36400.0	17300.0	24000.0	23500.0
Արարատ	Արտաշատ	22700.0-50000.0	31900.0	43200.0	42100.0
	Մասիս	22700.0-68200.0	33200.0	53600.0	52800.0
	Վեդի	13600.0-40900.0	24300.0	36600.0	35400.0
	Արարատ	13600.0-45400.0	22800.0	39200.0	38500.0
Արմավիր	Վաղարշապատ	36400.0-81800.0	57000.0	76700.0	75600.0
	Արմավիր	22700.0-59100.0	36300.0	47300.0	46300.0

Գեղարքունիք	Սևան	9100.0-40900.0	20800.0	38400.0	38100.0
	Գավառ	9100.0-36400.0	19600.0	24500.0	24100.0
	Մարտունի	13600.0-45400.0	20200.0	38800.0	38500.0
	Վարդենիս	9100.0-31800.0	10800.0	21600.0	21400.0
	Ճամբարակ	4500.0-22700.0	11000.0	12600.0	12500.0
Լոռի	Վանաձոր	22700.0-50000.0	35000.0	44500.0	43400.0
	Ստեփանավան	13600.0-36400.0	24800.0	26900.0	26700.0
	Սպիտակ	13600.0-36400.0	24700.0	28800.0	28500.0
	Այրվերդի	9100.0-31800.0	14800.0	20400.0	19900.0
	Տաշիր	9100.0-31800.0	14000.0	21500.0	21300.0
	Թումանյան	4500.0-18200.0	5900.0	6900.0	6700.0
	Շամլուղ	2300.0-13600.0	3900.0	4300.0	4200.0
	Ախթալա	9100.0-22700.0	11100.0	12000.0	11900.0
Կոտայք	Արովյան	31800.0-90900.0	58600.0	82700.0	81200.0
	Նոր Հաճն	18200.0-68200.0	42200.0	58800.0	57700.0
	Բյուրեղավան	18200.0-45400.0	25500.0	39200.0	38200.0
	Եղվարդ	22700.0-63600.0	29800.0	51700.0	49600.0
	Հրազդան	18200.0-40900.0	27400.0	34600.0	31500.0
	Ծաղկաձոր	31800.0-68200.0	50200.0	61400.0	58200.0
	Չարենցավան	18200.0-45400.0	23800.0	38200.0	37900.0
Շիրակ	Գյումրի	27300.0-59100.0	45400.0	47300.0	45500.0
	Արթիկ	9100.0-40900.0	16500.0	27700.0	27500.0
	Մարալիկ	13600.0-36400.0	14600.0	23500.0	23400.0
Սյունիք	Գորիս	18200.0-59100.0	21700.0	47000.0	46300.0
	Կապան	13600.0-40900.0	18000.0	35900.0	33800.0
	Սիսիան	9100.0-40900.0	20000.0	29600.0	29100.0
	Մեղրի	13600.0-36400.0	14100.0	24900.0	24600.0
	Ագարակ	9100.0-36400.0	13900.0	20000.0	19900.0
	Դաստակերտ	4500.0-18200.0	7800.0	8700.0	8600.0
Վայոց Ձոր	Վայք	9100.0-36400.0	23100.0	32500.0	31700.0
	Եղեգնաձոր	18200.0-59100.0	29700.0	45700.0	45000.0
	Ջերմուկ	13600.0-40900.0	21800.0	32600.0	31800.0
Տավուշ	Դիլիջան	13600.0-45400.0	28600.0	35600.0	35400.0
	Իջևան	18200.0-45400.0	30100.0	40900.0	40200.0
	Բերդ	9100.0-40900.0	19000.0	27200.0	26900.0
	Նոյեմբերյան	9100.0-31800.0	15300.0	15500.0	15400.0

2006թ. հունվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ ամսեկան աճը կազմել է 2.2%:

Ընդհանուր առմամբ, 2006թ. հունվարին հանրապետությունում օտարվել են 1038.61 հա /այդ թվում՝ 102.01 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 876.44 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 1017.91 հա /այդ թվում՝ 101.76 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 857.57 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 13.36 հա /այդ թվում՝ 0.11 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 11.76 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 7.34 հա /այդ թվում՝ 0.14 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակության գործարքներ, որից 7.12 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 565.19 հա, որից 561.45 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2006թ. հունվարին մարզերում հողերի առուվաճառքի քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

ԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանաւոյան հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանաւոյան հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	34	2.95	22	15.23	0	0.00	43	3.89	6	4.36
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	21	10.64	13	1.49	1	0.004
Արարատ	18	34.96	4	0.46	9	2.57	134	47.69	46	4.13	0	0.00
Արմավիր	41	200.99	0	0.00	3	0.06	119	360.46	36	3.63	3	0.06
Գեղարքունիք	1	2.00	4	0.40	8	0.80	14	8.60	18	2.36	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	7	5.89	3	0.20	4	0.03
Կոտայք	27	19.22	38	4.37	4	2.73	62	18.89	97	8.85	2	2.50
Շիրակ	1	0.50	17	0.43	0	0.00	17	13.45	7	0.68	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	11	20.43	1	0.19	1	0.30
Վայոց Ձոր	7	105.40	0	0.00	4	0.03	9	7.66	4	0.31	0	0.00
Տավուշ	1	0.10	2	0.15	1	0.17	5	0.70	1	0.23	0	0.00
Ընդամենը	96	363.17	99	8.76	51	21.59	399	494.41	269	25.96	17	7.254

2006թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են 1002 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2005թ հունվարին՝ 881/ այդ թվում 495-ը գյուղատնտեսական նշանակության /631/, 436-ը՝ բնակավայրերի /249/, 53-ը՝ արդյունաբերական օբյեկտների /1/ և 18-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

2006թ. հունվարին հողերի առուվաճառքներից 242 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով /2005թ հունվարին՝ 328/, այդ թվում 36-ը՝ /4.35 հա/ Երևանում /9/, իսկ 206-ը՝ /381.41 հա/ մյուս մարզերում /319/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 96 միավորը /363.16 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական /2005թ հունվարին՝ 286/, 94-ը՝ /7.98 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /37/, 34-ը՝ /8.35 հա/ հասարակական կառուցապատման /4/, 2-ը՝ /0.28 հա/ արդյունաբերական օբյեկտների /1/ և 16-ը՝ /6.00 հա/ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

2006թ. հունվարին հանրապետությունում արձանագրված 495 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 96-ը իրականացվել են աճուրդների, 7-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները, 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների			Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների		
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						12	4.22	362.2	6792.0	2105.5
Ապարան						1	0.16	90.6	769.8	303.4
Թալին						7	5.02	90.6	760.7	276.2
Ծաղկահովիտ						1	1.23	77.0	950.9	140.4
Արարատի մարզ										
Արտաշատ	12	8.70	208.3	2252.7	600.0	48	13.11	335.1	5433.6	1127.5
Մասիս	6	26.26	38.5	1419.5	615.8	14	4.01	181.1	6792.0	1449.0
Վեդի						69	29.57	203.8	4528.0	892.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						27	18.03	294.3	4075.2	715.4
Բաղրամյան	23	172.76	34.0	190.2	67.9	27	295.57	90.6	679.2	439.2
Վաղարշապատ	18	28.23	140.4	348.7	278.5	64	31.82	443.7	9056.0	1218.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						6	1.68	190.2	498.1	307.9
Ճամբարակ	1	2.00	264.9	264.9	264.9			45.3	543.4	117.7
Մարտունի								45.3	1811.2	434.7
Սևան								45.3	452.8	174.3
Վարդենիս						5	4.98	27.2	534.3	185.6
Լոռու մարզ										
Այվերդի						1	0.61	163.0	2490.4	335.1
Գուգարք						2	0.98	226.4	2716.8	860.3
Սպիտակ						1	1.13	226.4	1494.2	470.9
Ստեփանավան						3	3.18	90.6	2264.0	298.8
Տաշիր								45.3	452.8	185.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	16	5.72	86.0	731.3	412.0	36	8.55	271.7	11320.0	2830.0
Եղվարդ						20	7.99	172.1	11320.0	1956.1
Հրազդան	11	13.50	104.1	559.2	396.2	6	2.34	113.2	2716.8	674.7
Շիրակի մարզ										
Ախուրյան						7	6.01	249.0	1698.0	375.8
Ամասիա						1	0.13	36.2	237.7	90.6
Անի						5	3.68	108.7	362.2	194.7
Աշոցք								45.3	113.2	95.1
Արթիկ	1	0.50	43.0	43.0	43.0	4	3.63	63.4	1086.7	154.0
Սյունիքի մարզ										
Գորիս								90.6	724.5	289.8
Կապան								54.3	905.6	208.3
Մեղրի								181.1	1919.9	407.5
Սիսիան						11	20.43	45.3	679.2	167.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	105.40	97.4	154.0	122.3	9	7.66	117.7	2716.8	1177.3
Վայք								54.3	1539.5	452.8
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	905.6	307.9
Իջևան	1	0.10	600.0	600.0	600.0			240.0	1811.2	747.1
Նոյեմբերյան						5	0.70	45.3	3776.4	407.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2006թ. հունվարին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 291 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 65-ը իրականացվել են աճուրդների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						13	14940.0	113.2	3622.4	1947.0
Ապարան								113.2	633.9	158.5
Թային								45.3	362.2	67.9
Ծաղկահովիտ								45.3	362.2	63.4
Արարատի մարզ										
Արտաշատ	4	4600.0	276.2	439.2	319.2	10	7040.0	135.8	2716.8	708.6
Մասիս						22	20200.0	135.8	9056.0	914.7
Վեդի						14	14030.0	113.2	996.2	520.7
Արմավիրի մարզ										
Արմավիր						12	11360.0	135.8	2264.0	883.0
Բաղրամյան						1	1200.0	81.5	271.7	108.7
Վաղարշապատ						23	23715.0	135.8	4528.0	1199.9
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	5600.0	135.8	905.6	303.4
Ճամբարակ	4	4000.0	47.5	122.3	65.7			45.3	135.8	72.4
Մարտունի						7	9760.0	90.6	452.8	163.0
Սևան						2	1245.0	90.6	905.6	117.7
Վարդենիս						7	6976.0	45.3	226.4	77.0
Լոռու մարզ										
Ալավերդի								67.9	271.7	95.1
Գուգարք						3	2020.0	67.9	2354.6	484.5
Սյիխակ								63.4	452.8	99.6
Ստեփանավան								45.3	271.7	72.4
Տաշիր								45.3	135.8	61.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	20	20568.0	640.7	2325.1	2230.0	50	43054.0	135.8	6792.0	1435.4
Եղվարդ	18	23100.0	421.1	837.7	518.5	45	43565.0	135.8	6792.0	1598.4
Հրազդան						2	1930.0	135.8	9056.0	1014.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	16	4139.8	450.5	2637.6	1209.0	2	651.0	113.2	1539.5	262.6
Ամասիա								45.3	135.8	61.1
Անի						1	1680.0	67.9	181.1	83.8
Աշոցք								40.8	135.8	54.3
Արթիկ	1	140.0	450.5	450.5	450.5	4	4450.0	67.9	928.2	122.3
Սյունիքի մարզ										
Գորիս								67.9	543.4	199.2
Կապան								67.9	633.9	185.6
Մեղրի								67.9	407.5	104.1

Միսիան						1	1940.0	67.9	407.5	117.7
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	3087.0	67.9	1132.0	217.3
Վայք								77.0	633.9	101.9
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	633.9	77.0
Իջևան	2	1500.0	289.8	289.8	289.8	1	2341.0	67.9	1358.4	312.4
Նոյեմբերյան								45.3	633.9	99.6

2006թ. հունվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 15 գործարքներ 24.73 հա մակերեսով, ընդ որում 5-ը՝ Արարատի /0.77 հա/ և 10-ը՝ Շիրակի /23.96 հա/ մարզերում:

2006թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 486 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.3%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 34.4%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2005թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն նվազել է 31.0%-ով:

2006թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 27 բնակարանների, 18 անհատական բնակելի տների, 155 հասարակական, 25 արտադրական նշանակության օբյեկտների, 1 ավտոտնակի և 260 միավոր հողերի վարձակալության գործարքներ:

2006թ. հունվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 23 վարձակալության գործարքների քանակը 2005թ. հունվարի համեմատ նվազել է 39.5%-ով:

2006թ. հունվարին հանրապետությունում վարձակալվել են 2496.37 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 5.14 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 2258.08 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 4.08 հա՝ բնակավայրերի, 226.31 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 1.40 հա՝ անտառային, 1.36 հա՝ էներգետիկայի օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Լոռու մարզում՝ 969.73 հա, որից 968.10 հա՝ գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ 0.02 հա բնակավայրերի հողեր, Արմավիրի մարզում:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1456.40 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. հունվարին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	9	66.82
Արարատ	1	5.00	13	28.68
Արմավիր	0	0.00	0	0.00
Գեղարքունիք	10	386.40	27	473.14
Լոռի	2	965.00	4	3.10
Կոտայք	2	100.00	64	182.49
Շիրակ	0	0.00	29	39.85
Սյունիք	0	0.00	1	1.10
Վայոց Ձոր	0	0.00	7	6.50
Տավուշ	0	0.00	0	0.00

<i>Ընդամենը</i>	<i>15</i>	<i>1456.40</i>	<i>154</i>	<i>801.68</i>
-----------------	-----------	----------------	------------	---------------

2006թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 438 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.5%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. հունվարի համեմատ աճել է 47.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /14.8%/, առանձնատների /20.1%/ և հողերի /8.2%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 204 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. հունվարի համեմատ աճել է 16.6%-ով:

2006թ. հունվարին հանրապետությունում գրավադրվել են 71.57 հա /այդ թվում 2.71 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 68.09 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Կոտայքի մարզում՝ 51.41 հա, որից 51.35 հա՝ գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 0.01 հա բնակավայրերի հողեր, Լոռու մարզում:

2006թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 7 և 5 ործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2005թ. հունվարի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 47.8%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում, Արարատում և Կոտայքում՝ 25.0-ական%:

2006թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 987 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2005թ. հունվարի համեմատ նվազել է 5.2%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /54.1%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն